# ...ՈՒ ՆՈՐԻՑ ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 3 - 4 (16806) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 15 ՀՈՒՆՎԱՐԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՆՈՐ ՏԱՐԻՆ ԹՈՂ ԼԻՆԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ»



Ի'մ սիրելի հայրենակիցներ, շնորհավոր ձեր Նոր տարին: Մաղթում եմ երջանկություն, հաջողություններ եւ խաղաղություն ձեր ընտանիքներին ու մեր երկրին: Ցանկանում եմ, որ Նոր՝ 2020 թվականը, լինի մեր միասնության եւ համերաշխության տարի: Հեռու մնացեք չարից եւ ատելության լեզվի օգտագործումից, քանզի երկուսն էլ բացասական մթնոլորտ են ստեղծում:

Արդ, թող 2020 թվականին այլեւս չգրանցվեն առեւանգումներ, այլ բացվեն բոլոր անցակետերը, եւ Վրաստանի ողջ տարածքով հնարավոր լինի տեղաշարժվել առանց խոչընդոտների:

Բոլորին մաղթում եմ խաղաղություն, հանդարտություն, երջանկություն եւ հաջողություն:

## ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «2020 ԹՎԱԿԱՆԸ ԼԻՆԵԼՈՒ Է ՀՈՒՅՍԻ ՏԱՐԻ»



Ի'մ թանկագիններ, շնորհավոր 2020 թվականը, երջանկություն եւ հաջողություններ եմ մաղթում յուրաքանչյուրիդ եւ մեր հայրենիքին:

Համոզված եմ, որ 2020 թվականը կլինի հաջողակ: Վրաստանն իր ավանդույթներով եւ մշակութային ինքնությամբ կարեւոր նվաճումներ կգրանցի եվրոպական ու եվրատլանտյան ինտեգրման ճանապարհներին: Մենք անպայման կզբաղեցնենք մեր տեղը եվրոպական ընտանիքում: 2020 թվականը լինելու է հույսի եւ հաղթանակի տարի, ինչը զարգացում ու խաղաղություն կբերի մեր երկրին: Մեկ անգամ եւս շնորհավորում եմ բոլորիդ Նոր տարին, առողջություն եւ երջանկություն մաղթում: Բարիք, սեր եւ խաղաղություն Վրաստանին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ



Սիրելի բարեպաշտ ժողովուրդ ի հայրենիս եւ ի սփյուռս,

Ամանորի տոնական այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրական սիրով Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում ամենքիդ:

Ամանորը ժամանակի յուրօրինակ սահմանագիծ է հնի եւ նորի, անցյալի ու ապագայի միջեւ եւ առիթ՝ գնահատելու անցած ուղին, արարված լավն ու բարին, թույլ տրված սխալները, որովհետեւ դրանց անկեղծ ու շիտակ գնահատականն է պայմանավորում այն տեսլականն ու ակնկալությունները, որոնցով մուտք ենք գործում 2020 թվական:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

*Հունվարի 6-ին Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին, միակը քրիստոնեական աշխարհում, հավատարիմ նախնյաց ավանդույթներին (թեմայի շուրջ՝ տես 4-րդ էջ) նշեց Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը եւ Աստվածահայտնությունը:*

Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում տոնական Սուրբ պատարագը մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը: Այդ օրը Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցի էին եկել Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, Վրաստանի խորհրդարանի առաջին փոխխոսնակ Գիորգի Վոլսկին, պատգամավորներ Բեքա Օդիշարիան, Ռուսլան Պողոսյանը, Դավիթ Ճիճինաձեն, Սերգո Ռատիանին, Վրաստանի հաշտության եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության նախագահի Զազա Վաշաղմաձեն, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվես-



(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ՝ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Շնորհավորում եմ մեր հայ քաղաքացիներին, ովքեր հունվարի 6-ին տոնում են Սուրբ Ծնունդը եւ Մկրտությունը: Խաղաղություն, երջանկություն եւ բարօրություն եմ մաղթում:

Մեր ժողովուրդների միջեւ սերն ու բարեկամությունը ամրանում է դարերով, եւ մենք կրկին շարունակելու ենք մեր երկրի կառուցումը:

Շնորհավորում եմ եւ մաղթում ամենայն բարիք:

***ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ***
*Վրաստանի վարչապետ*

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին հունվարի 6-ին, հին տաղավարով նշում է Սուրբ Ծննդյան եւ Մկրտության տոնը:

Շնորհավորում եմ այս մեծ տոնի կապակցությամբ: Հայ եւ վրաց ժողովրդի դարավոր բարեկամությունը հիմնված է քրիստոնեական հավատքի արժեքների վրա:

Մաղթում ենք ձեզ բարգավաճում եւ ուրախություն:

***ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ***
*Վրաստանի նախագահ*

## ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՐ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Հանուն Վիրահայոց թեմի հոգեւորականաց դասի եւ աշխարհիկ ծառայողների, ցանկանում ենք շնորհավորել Նոր տարվա եւ Սուրբ Ծննդյան ուրախաբեր տոների առիթով:

Նոր տարին ինքն իրենից ներկայացնում է սկիզբ, որը մենք արժեւորում ենք նոր գաղափարների, նոր գործերի ծնունդով եւ նորանոր հաղթանակներ ձեռք բերելու միջոցով:

Աղոթում ենք, որպեսզի այս տարի եւս կարողանանք մեր ծառայությամբ, մեր աշխատանքով ճիգ ու ջանք չխնայել Վիրահայոց թեմը ամրացնելու եւ ուժեղացնելու համար, առավել հոգատար եւ ուշադիր լինենք հավատավոր ժողովրդի նկատմամբ, է՛լ ավելի ամրապնդենք հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամությունը, մշտապես մեր աղոթքը առաքենք առ Աստված մեր երկու հայրենիքների շենացման, բարգավաճման եւ ուժեղացման համար:



Թող Նոր տարում Աստծու զորավոր Աջն ու աչքը մշտապես լինեն մեր ժողովրդի վրա, թող մեր Տեր Հիսուս

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)



**Բատոնո Վան.**

Շնորհավորում եմ Ձեզ, վրաց եւ հայ ժողովուրդների բարեկամությունը կամրջող, իր հարյուրամյա հոբելյանական տարին մուտք գործող «Վրաստան» թերթի խմբագրության աշխատակիցների, պարբերականի բազմահազար ընթերցողների Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

«Վրաստան» թերթի միջոցով ամանորյա իմ մաղթանքներն եմ հղում Վրաստանի հայազգի քաղաքացիներին, մեր միասնական հայրենիքի օրինահնազանդ եւ ակտիվ շինարարներին: Շնորհավոր ձեր Նոր տարին, թանկագին բարեկամներ, երջանկություն եւ խաղաղություն ձեր ընտանիքներին:

Լիահավատ եմ, որ մեր ընդհանուր հայրենիքը կդառնա միասնական ու հզոր՝ շնորհիվ մեր երկրի բազմազգ բնակչության:

Շնորհավո՜ր Ամանոր ու Սուրբ Ծնունդ:

***ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ***

***Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար***

---





Թանկագի'ն բարեկամներ, ի սրտե շնորհավորում ենք «Վրաստան» թերթի աշխատակազմին Նոր տարվա եւ Սուրբ Ծննդյան առիթներով, երջանկություն եւ բարիք ձեզ եւ ձեր ընտանիքներին, իսկ իր փառավոր 100-ամյակը այս տարի նշող պարբերականին մաղթում ենք երկարակեցություն եւ ստեղծագործական առաջընթաց:

Օգտվելով առիթից՝ մեր ամանորյա մաղթանքներն ենք հղում Ախալցիխեի մունիցիպալիտետի բազմազգ բնակչությանը: Սիրելի' բարեկամներ, թող 2020-ը արգասաբեր, հաջողակ եւ առաջընթացի տարի լինի ձեզանից յուրաքանչյուրի համար:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

***ԳԵԼԱ ՆՈՋԱՁԵ***
***Ախալցիխեի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ***

***ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***
***Ախալցիխեի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ***

---



Ախալքալաքի մունիցիպալիտետի ռեսուրս-կենտրոնը անցած՝ 2019թ. ընթացքում հետեւողական է եղել շրջանի կրթական համակարգի բարեփոխումների ողջ ընթացքին՝ արձանագրելով հաջողություններ մանկավարժական գործունեության եւ աշակերտների առաջադիմության մեջ:

Համոզված եմ, որ 2020թ. կլինի ձեռքբերումների եւ նորանոր հաջողությունների տարի:

Օգտվելով ստեղծված հնարավորությունից՝ «Վրաստան» թերթի միջոցով ուզում եմ սրտանց շնորհավորել մեր շրջանի բոլոր մանկավարժներին, աշակերտներին եւ Վրաստանի Հանրապետության բոլոր բնակիչներին Ամանորի եւ Սուրբ Ծննդի կապակցությամբ:

Սիրելի' ժողովուրդ, ի սրտե մաղթում եմ աննկուն կամք, համբերություն եւ երազանքների իրականացում: Թող գալիք տարին ամփոփելիս՝ բարին ու դրականը գերակշիռ մաս կազմեն ձեր կյանքում:

***ԹԵՐԵԶԱ ՉԻՎՉՅԱՆ***

***Ախալքալաքի մունիցիպալիտետի ռեսուրս-կենտրոնի տնօրեն***

---



«Վրաստան» թերթի աշխատակիցներին, թերթի ընթերցողներին ի սրտե շնորհավորում եմ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան առիթներով: Տա' Աստված, որ 2020 թվականը լինի արգասաբեր, հետաքրքիր եւ հաջողակ յուրաքանչյուրիդ համար:

Ցանկանում եմ իմ ամանորյա շնորհավորանքները հղել նաեւ բոլոր ծալկացիներին՝ բարեկեցություն եւ բարօրություն ձեզ եւ ձեր ընտանիքներին, թանկագի'ն բարեկամներ:

Յուրաքանչյուր Նոր տարի ուղեկցվում է նորամուծությունների սպասումներով, բարի ցանկությունների կատարման հույսերով: Ուստի, ցանկանում եմ, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի երբեք հուսախաբ չլինի, ուրախություն ձեզ եւ բարեկեցություն՝ մեր երկրին:

***ԻԼԻԱ ՍԱԲԱՁԵ***

***Ծալկայի մունիցիպալիտետի վարչության նախագահ***



Թանկագի'ն բարեկամներ, մեր սիրելի «Վրաստան» թերթի միջոցով ցանկանում եմ իմ ամանորյա բարեմաղթանքները հղել ողջ վիրահայությանը, բոլորին շնորհավորել Նոր տարվա ու Սուրբ Ծննդի առթիվ:

Մասնավորապես ցանկանում եմ դիմել «Վրաստանի» աշխատակիցներին: Այս տարին հոբելյանական է, թերթը դառնում է 100 տարեկան: Այդ հոբելյանական տարում մեր սիրելի պաբերականին մաղթում եմ երկարակեցություն, հաջողություններ՝ վրաց-հայկական դարավոր բարեկամության ամրապնդման առաքելության մեջ:

Շնորհավո՜ր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

***ՌՈՒՍԼԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ***

***Վրաստանի խորհրդարանի պատգամավոր***

---

***«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանին.***



Թանկագի'ն բարեկամ, ի սրտե շնորհավորում եմ Ձեր եւ այս տարի իր պատմության 100-րդ էջը բացող «Վրաստան» թերթի խմբագրության աշխատակիցների, թերթի ընթերցողների Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

Օգտվելով առիթից՝ իմ ամանորյա մաղթանքներն եմ հղում հարգարժան, ինձ վստահության քվե տված, Թբիլիսիի Իսանիի շրջանի իններորդ ընտրատարածքի բոլոր իմ ընտրողներին, նրանց ընտանիքներին: Բարեկամնե'ր, ամենայն բարիք ու հաջողություններ ձեզ Նոր տարում՝ 2020 թվականին:

***ԴԱՎԻԹ ճԻճԻՆԱՁԵ***

***Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր***

---



Թանկագի'ն բարեկամներ, ի սրտե շնորհավորում եմ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ, մաղթում երջանկություն եւ հաջողություն:

Իմ անկեղծ շնորհավորանքներն եմ հղում նաեւ Վրաստանի Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ եկեղեցու հավատացյալներին, ովքեր հունվարի 6-ին նշեցին Քրիստոսի Հրաշափառ Ծնունդը:

Բարեկամնե'ր, անձամբ իմ եւ Կրոնի հարցերով պետական ծառայության անունից այս պայծառ տոնի առթիվ շնորհավորում եմ Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցու Վիրահայոց թեմին ու հավատացյալներին՝ մաղթելով հաջողություններ:

***ԶԱԶԱ ՎԱՇԱՂՄԱՁԵ***

***Կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ***

---



Սիրելի' դամալացիներ, հայրենակիցներ, «Վրաստան » թերթի խմբագրություն, շնորհավորում եմ ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

2019 թվականը մեզանում նշանավորվեց մի շարք ենթակառուցային նախագծերի իրականացմամբ: Առաջիկայում եւս անելիքները շատ են: Օգտվելով առիթից՝ իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում գյուղում բնակվող եւ գյուղից դուրս ապրող դամալացի բարերարներին՝ իրենց հարազատ օրրանին սատարելու համար: Նրանց մաղթում եմ առողջություն եւ ամենայն բարիք:

Թող 2020 թվականը լինի կայունության, նոր հաջողությունների եւ ձեռքբերումների տարի: Կրկին անգամ շնորհավորում եմ բոլորիդ, մաղթում ընտանեկան ջերմություն ու երջանկություն:

***ՄԱՐՏԻՆ ԿԵՐԵԿՑՅԱՆ***

***Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալայի գյուղապետ***

**Անահիտ Բոստանջյան**

## ՆՈՐ ՏԱՐԻ



*Նորից աշխարհում Նոր տարի եկել,*
*ամենուր շենշող լույսեր է վառել,*
*ուրախությունն է նորից թեւածում,*
*ցնծության բոլոր դռները բացում...*
*եւ թվում է, թե կախարդուհու պես*
*լոկ խնդությունը պիտի մեզ գրկի,*
*թվում է, այո', քանզի մեր ներսում*
*ծվարած, կծկված ցավեր ունենք հին,*
*թախիծներ՝ չանցնող մեր ներսից անդին,*
*հոգիների սուր, ամուր փականքներ,*
*գայթակղվում ենք, ինչով կարող ենք,*
*մինչեւ իսկ ինչով չենք կարող անգամ,*
*նրան՝ խնդությանն այս ամանորյա,*
*որ մերթ սուփրա է առատ ու շռայլ,*
*մերթ պար է ու երգ, ու ծափ տոնական,*
*մերթ համբույր սիրո, մերթ բարեմաղթանք...*
*ու գերեվարված խնդությանն այս մեծ*
*ամեն կերպ ձգտում, ամեն ինչ անում,*
*որ ցավը ներսից դուրս չելնի հանկարծ,*
*մնա փականքված հոգու խորշերում,*
*որ ուրախություն միայն թեւածի*
*տիեզերական մեր մոլորակում,*
*եւ ցնծության բոլոր դռները բացի*
*Նա, ով մեծ հոգսի դռներն է փակում...*

*31.01.2009*
*Թբիլիսի*

---

### ԵՐԵՔ ՏԱՐԻ՝ ԱՌԱՆՑ ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ

2017 թվականի հունվարի 8-ին ընդհատվեց հայ-վրացական ժողովուրդների բարեկամության խորհրդանիշ Անահիտ Բոստանջյանի կյանքը: Մի քանի տասնյակ բանաստեղծական ու թարգմանական գրքերի ու ժողովածուների հեղինակ, Թբիլիսիի «Մերանի» հրատարակչության հայերեն հրատարակությունների խմբագիր, «Կամուրջ» տարեգրքի գլխավոր խմբագիր, «Վրաստան» թերթի առաքման բաժնի վարիչ, հայաստանյան «Օքրո Օքրոյան» հիմնադրամի վրաստանյան ներկայացուցիչ, Վրաստանի եւ Հայաստանի գրողների միությունների անդամ, Վրաց մշակույթի դեսպան Անահիտ Բոստանջյանը խմբագրական ու հրապարակախոսական գործունեության համար արժանացել է բազմաթիվ պարգեւների ու շնորհակալագրերի: Նա Վաժա Փշավելայի մրցանակի դափնեկիր է, Վրաստանի Պատվո շքանշանակիր, Նիկո Նիկոլաձեի անվան մրցանակակիր, ՀՀ Մովսես Խորենացի մեդալակիր, ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալակիր, սփյուռքի նախարարության եւ Մխիթարյան Միաբանության «Հակոբ Մեղապարտ» մեդալակիր:

Այս 3 տարիների ընթացքում տասնյակ միջոցառումներ են կազմակերպվել, մրցույթներ, գրական լսումներ՝ նրա ֆիզիկական բացակայությանը հակադրելով կենդանի ներկայությունը նրա բանաստեղծությունների ու դրանցից ծնված երգերի միջոցով: «Թույլ չտվեցի օրերիս երբեք խաղալիք լինել այս կյանքի ձեռքին»,- գրում է Անահիտ Բոստանջյանը:

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՎԱՆԴՈՒՅԹ

## ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ը՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԻ ՕՐ

***Հունվարի 14-ը Վրաստանի պետական դրոշի օրն է: Երկրի կարեւորագույն խորհրդանիշներից մեկի՝ Ազգային դրոշի օրը նշվում է 2012 թվականից:***



Վրաստանի պետության հնգախաչ դրոշը վերականգնվել է 2004 թվականի հունվարի 14-ին: Հերալդիկայի պետական խորհրդի ներկայացուցիչ Դավիթ Չխեիձեի հայտարարությամբ, ազգային դրոշն ունի դարերի պատմություն: Հնագույն ժամանակներից, եվրոպական քարտեզների վրա Վրաստանը նշում էին հնգախաչ դրոշով:

Ազգային դրոշի օրվան նվիրված միջոցառման շրջանակներում, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին Չոխատաուրիում, էրիսթավների պալատում բարձրացրեց Վրաստանի դրոշը: Միջոցառմանը ներկա էր նաեւ խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն:

Ավանդույթի համաձայն, այդ օրը Թբիլիսիի քաղաքային սակրեբուլոյի անդամները շենքի պատշգամբներից ծածանեցին Վրաստանի դրոշը:

ՓԱՐԱՋԱՆՈՎ - 96



## ԿՈԳԵԿՈՉՎԻ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԸ

***Աշխարհահռչակ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը (1924-1990) ծնվել է Թիֆլիսում եւ մշտապես կապված է եղել ծննդավայր քաղաքին: Ի հիշատակ մեծանուն արվեստագետի, Թբիլիսիում, Փարաջանովի ապրած բնակարանի ճակատին, 1992-ին բացվեց հուշատախտակ, իսկ 2004-ին, հինավուրց «Մեյդան» թաղամասում բացվեց նրա հուշարձանը:***

2015թ.-ից Թբիլիսիում, «Վրացահայերի միություն» կազմակերպության (ղեկավար՝ Մարի Առաքելովա) նախաձեռնությամբ, անց է կացվում աշխարհահռչակ հայ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի հիշատակին նվիրված միջոցառում: Ամենամյա ավանդական միջոցառումն ուղեկցվում է մրցույթ-ցուցահանդեսով, ուր ներկայացվում են ստեղծագործական արվեստի ցուցանմուշներ, այդ շարքում՝ նաեւ Փարաջանովի կոլաժները: Մրցույթին մասնակցում են տարբեր տարիքի արհեստավարժ ու ինքնուս ստեղծագործողներ: Միջոցառմանը աջակցում են Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, Վրաստանում ՀՀ դեսպանությունը, Երեւանի «Սերգեյ Փարաջանովի անվան տունթանգարանը», Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայպետդրամայի թատրոնը: Նրան մշտապես ներկա են լինում երկրի մշակույթի անվանի գործիչներ:

Այս տարի մեծ ռեժիսորի ոգեկոչման երեկոն տեղի կունենա հունվարի 15-ին, Թբիլիսիի «Կովկասյան տանը»: Երեկոյի շրջանակներում, կկայանա ստեղծագործական արվեստի ավանդական մրցույթ-ցուցահանդես եւ մրցույթի հաղթողների պարգեւատրման արարողություն:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ

## 41-ՐԴԸ՝ 162 ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

***Աշխարհի ամենահեղինակավոր զեկույցներից «Մարդու ազատության ինդեքսը» հրապարակել է 2019 թվականի տվյալները: Հետազոտության մեջ յուրաքանչյուր երկրի մարդու ազատությունը գնահատվում է 0-10 բալ:***

Ցուցանիշը ներառում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են օրենքի գերակայությունը, անվտանգությունը, իրավական համակարգը, մարդու իրավունքների պաշտպանությունը եւ այլն:

Արդյունքների համաձայն, հատկապես բարձր ցուցանիշ ունեն Հյուսիսային Ամերիկայի եւ Եվրոպայի երկրները: Օրինակ՝ առաջին տասնյակը զբաղեցնում են Նոր Զելանդիան, Շվեյցարիան, Հոնկոնգը, Կանադան, Ավստրալիան, Դանիան, Լյուքսեմբուրգը, Ֆինլանդիան, Գերմանիան եւ Իռլանդիան:

Վրաստանը 162 երկրների շարքում 7,74 բալով վարկանիշում զբաղեցնում է 41-րդ հորիզոնականը, ինչը տարածաշրջանի երկրների համեմատ լավագույն ցուցանիշն է:

Ավելի կոնկրետ, ցուցանիշի համաձայն, մարդու ազատության ցուցանիշը կազմում է 7,53, իսկ տնտեսական ազատությունը՝ 7,94:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐՆ ՈՒ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ

***Հունվարի 1-ից ավելացել են կենսաթոշակը եւ սոցիալական փաթեթները: Ավելացված փաթեթից կօգտվի մոտ 114 հազար սահմանափակ կարողություններ ունեցող անձ:***

Վրաստանի՝ 2020 թվականի պետական բյուջեի մասին Վրաստանի օրենքով նախատեսված է սահմանափակ կարողություններ ունեցող անձանց համար սոցիալական փաթեթը ավելացնել 20 լարիով: Նշված փոփոխությունները վերաբերելու են բոլոր տեսակի սահմանափակ կարողություններ ունեցող անձանց:

Այդ նպատակով անհրաժեշտ տարեկան գումարը կազմում է 35 միլիոն լարի:

2020 թվականի հունվարի 1-ից 20 լարիով ավելի կենսաթոշակ կստանան նաեւ կենսաթոշակի տարիքին հասած անձինք:

Նոր տարվանից բարձրալեռ շրջանների բնակիչները, 220 լարիի փոխարեն, կստանան 264 լարի:

Ինչ վերաբերում է կենսաթոշակի կուտակային համակարգին, ապա կենսաթոշակային գործակալության տվյալներով, կենսաթոշակային հիմնադրամում այս պահի դրությամբ մոբիլիզացված է 563 489 312 լարի, իսկ գրանցված նպաստը կազմում է 17 287 125 լարի:

Բացի այդ, կենսաթոշակային գործակալությունում գրանցված է 959 648 քաղաքացի եւ 61 165 կազմակերպություն:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

## ԻՆՔՆԱՀՌՉԱԿ ԱԲԽԱԶԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ. ՆՇԱՆԱԿՎԵԼ ԵՆ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, 2019 թվականի սեպտեմբերին Աբխազիայի ինքնահռչակ հանրապետությունում անցկացվեցին նախագահական ընտրություններ: Ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով, երկրի նախագահ վերընտրվեց Ռաուլ Խաջիմբան:***

Ընդդիմությունը բողոքարկել էր սեպտեմբերյան ընտրությունների արդյունքները, եւ ահա, նոր տարվա մեկնարկին Աբխազիայի Գերագույն դատարանի՝ սեպտեմբերյան ընտրությունների օրինականությունն հաստատող որոշումը հանգեցրեց բողոքի լայն ցույցի: Ցուցարարները բարձրացրին Խաջիմբայի պաշտոնաթողության եւ նախագահական նոր ընտրությունների անցկացման պահանջ: Բողոքավորները ներխուժեցին նախագահի նստավայր, ընդհարումներ եղան ցուցարարների եւ իրավապահների միջեւ: Հունվարի 10-ին Աբխազիայի Գերագույն դատարանը չեղարկեց անցյալ տարվա սեպտեմբերյան ընտրությունեների արդյունքները, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանեց նոր ընտրությունների անցկացման ամսաթիվը՝ մարտի 22-ին:

Աբխազիայի ինքնահռչակ հանրապետության նախագահի լիազորությունները ժամանակավորապես վերապահվել են երկրի վարչապետին:

Նշենք, որ Խաջիմբան՝ ինքը հրաժարվեց մասնակցել ընտրություններին, թեպետ ընտրություններն իրավաբանորեն կոչվում են կրկնակի, սակայն կարող են մասնակցել նաեւ նոր թեկնածուներ:



### ՆԵՐՈՒՄ՝ ՀԻՆԳ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ

*Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին Սուրբ Ծննդյան տոնի առիթով ներում է շնորհել հինգ դատապարտյալի:*

*Նախագահի նստավայրում անցկացված ճեպասուլիսում Սալոմե Զուրաբիշվիլին չի հստակեցրել, ներում շնորհված հինգ դատապարտյալներից բոլո՞րն են ազատվելու բանտից, թե՞ ոչ:*

*Բացի այդ, ցուցակում չի հայտնվել հոգեւորական Գիորգի Մամալաձեն:*

*Սեպտեմբերի 18-ից հետո հայտարարված մորատորիումից հետո, նախագահը համաներման ակտը ստորագրելու է առաջին անգամ:*

*Համաներումն իրականացվել է նոր կարգով, որն ուժի մեջ է մտել 2019 թվականի նոյեմբերի 27-ից:*

### ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՇՈՒՐՋ ՏԱՍԸ ՄԻԼԻՈՆ ԶԲՈՍԱՇՐՋԻԿ

*- 2019 թվականին Վրաստանը հյուրընկալել է միջազգային ճանապարհորդների ու զբոսաշրջիկների ռեկորդային քանակ,- այս մասին հայտարարել է Զբոսաշրջության ազգային վարչության ղեկավար Մարիամ Քվրիվիշվիլին:*

*Նրա խոսքով, նախորդ տարի Վրաստան է այցելել 9.357.964 միջազգային ճանապարհորդ:*

*Զբոսաշրջության ազգային վարչության տեղեկությամբ, 2019 թվականին, նախորդ տարվա համեմատ, այցելել է 7,8%-ով զբոսաշրջիկ: Միջազգային այցելուների այցերի քանակը կազմել է 7.725.774, աճը 7,3% է:*

*Ամենաշատ այց է իրականացվել Հայաստանից (+7,6 տոկոս), Ադրբեջանից (+7,2 տոկոս), Թուրքիայից (+5,3 տոկոս) եւ Ռուսաստանից (+4,8 տոկոս):*

### ԶԳՈՒՇԱՑԵՔ. ԳՐԻՊԻ ՍԵԶՈՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՄԻՆՉԵՎ ԱՊՐԻԼԸ



*Հիվանդություններ վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն հայտարարեց, որ դեկտեմբերի վերջին, երեք շաբաթվա ընթացքում, 100 000 բնակչի համար գրանցվել է գրիպի 312 նոր դեպք:*

*- Գրիպի սեզոնը երկրում կշարունակվի մինչեւ ապրիլ, ուստի ցուցանիշը հնարավոր է փոփոխվի,- հայտարարեց Գամղրելիձեն:*

*Հունվարի 1-ի դրությամբ, շաբաթվա ընթացքում 100 հազար մարդու հաշվով 191 դեպք է գրանցվել: 2-րդ շաբաթում՝ դեպքերի թիվը հասել է 219-ի: Մասնագետները վստահեցնում են, որ Վրաստանն այս պահին հեռու է համաճարակային շեմից: Համաճարակային է համարվում 100 հազար բնակչից 450-500-ի ցուցանիշը: Ընդ որում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում, երկրում ավելի ծանր իրավիճակ էր: Ինչ վերաբերում է հոսպիտալացմանը՝ 3 տոկոսով ավելացել է (նախորդ շաբաթ՝ 22 տոկոս, այս շաբաթ 25 տոկոս):*

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, ժողովրդական պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ Իզաբելա Օսիպովան, համայնքային կառույցների ղեկավարներ, հավատացյալներ:

Հընթացս Սուրբ Պատարագի, Վիրահայոց թեմի առաջնորդը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առիթով:

Ընթերցվեց նաեւ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի ուղերձը:



Ապա եկեղեցում հավաքվածներին խոսքով դիմեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն:

- Շնորհավորում եմ մեր հայ հայրենակիցներին, հայ հավատացյալներին, Սուրբ Ծննդյան եւ Մկրտության տոնի կապակցությամբ: Մաղթում եմ խաղաղություն, բարեկեցություն եւ երջանկություն:

Մեր հայրենակիցների դերը վրաց պետության կառուցման, տնտեսական եւ մշակութային զարգացման գործում անգնահատելի է, եւ մեր երկիրը հպարտանում է այն մշակութային ժառանգությամբ, որը ստեղծել են երկրում ապրող տարբեր էթնիկ եւ կրոնական խմբերի ներկայացուցիչները: Պատիվ ունեմ շնորհավորելու ձեզ Վրաստանի խորհրդարանի անունից եւ կիսել ձեզ հետ այսօրվա ուրախությունը:

Խոսքի ավարտին խորհրդարանի խոսնակը բոլորին հրավիրեց մասնակցելու Վրաց Սուրբ եկեղեցու Սուրբ Ծննդյան տոնակատարությանը:

Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առիթով տոնական Սուրբ եւ Անմահ պատարագներ մատուցվեցին եւ Ջրօրհնեքի արարողություններ կատարվեցին Թբիլիսիի Սուրբ էջմիածին, Ախալցիխեի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Ախալքալաքի Սուրբ Խաչ, Նինոծմինդայի Սուրբ Սարգիս եւ հարակից գյուղերի, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Ռուսթավիի, Մառնեուլիի շրջանների գյուղերի եկեղեցիներում ու հոգեւոր տաճարներում:

Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցի այցելեցին եւ հավատացյալների Սուրբ Ծննդյան տոնը շնորհավորեցին Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության նախագահ Թոռնիկե Ռիժվաձեն, Բաթումիի քաղաքապետ Լաշա Կոմախիձեն եւ ուրիշներ:

Ամենուրեք Սրբասուրբ մյուռոնով օրհնվեց ջուրը: Կիրակոս վարդապետի հանդիսապետությամբ Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում Սուրբ պատարագի վերջում կատարված Ջրօրհնեքի արարողությանը եկեղեցու Խաչի կնքահայր դարձավ Յուրի Երեմյանը, Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու խաչի կնքահայր՝ Խաչիկ Փափախչյանը, Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցու կնքահայր՝ Մինաս Սափրիչյանը:



## ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՐ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Քրիստոսի Սուրբ Ծննդյան լույսը պարուրի յուրաքանչյուրիս եւ այդ լույսով ուժեղացած, եւ այդ լույսով զորացած շարունակենք մեր կյանքը: Մշտապես հիշենք, որ մեզանից յուրաքանչյուրն ունի առաքելություն եւ մեզանից յուրաքանչյուրի առաքելության ամենակարեւոր մասերից մեկն է Աստծուն մեր նվիրական ծառայությունը եւ այդ ծառայությամբ մեր կյանքը առաջ տանելը:

2020 թվականը թող լինի խաղաղության, առաջընթացի, երկրի միավորման, նպատակների իրականացման, ժողովուրդների բարեկեցության բարձրացման տարի: Մաղթում ենք՝ նորանոր կամուրջներով ամրապնդվի հայ եւ վրացի ժողովուրդների բարեկամությունը, բարի գործերի հաղթանակներ արձանագրվեն Հայաստանի եւ Վրաստանի պատմության էջերում, առողջություն եւ բարեկեցություն տիրեն ընտանիքներում, թող իրականանան բոլոր մարդկանց երազանքները, որոնք լինեն լույսով ու ջերմությամբ ողողված:

Շնորհավո՜ր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

## ԻՆՉՈ՞Ւ Է ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ՆՇՈՒՄ ՀՈՒՆՎԱՐԻ 6-ԻՆ

*Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին պահպանելով նախնյաց ավանդույթը՝ Քրիստոսի Ծնունդն ու Մկրտությունը, ի տարբերություն մյուս քրիստոնեական եկեղեցիների, որոնք Քրիստոսի Ծնունդը նշում են դեկտեմբերի 25-ին կամ հունվարի 7-ին, իսկ Մկրտությունը՝ հունվարի 6-ին կամ 19-ին, նշում է նույն օրը՝ հունվարի 6-ին:*

Հայոց Ծննդյան տոնին նշվում են երկու կարեւորագույն իրադարձությունները՝ Քրիստոսի Ծնունդը Բեթղեհեմում եւ Նրա Մկրտությունը՝ Հորդանան գետում: Հունվարի 6-ին, ի նշանավորումն այդ երկու իրադարձությունների, Հայ Առաքելական եկեղեցում անցկացվում է Ջրօրհնեքի կրոնական արարողություն:



Տոնական օրվա սահմանման նախապայմանը հետեւյալն է: Դեռեւս 313 թվականին Միլանի էդիկտով հռոմեական կայսրությունում Քրիստոնեությունը հավասարեցվեց մյուս կրոնական ուղղություններին եւ քրիստոնյաներին թույլ տրվեց կատարել իրենց արարողությունները: Իսկ մինչ այդ, 274 թվականին Ավրելի կայսեր կողմից մեծ շուքով նշվեց Արեւի երկրպագության տոնը: Հռոմեա-կաթոլիկական աղբյուրների համաձայն, Քրիստոսի Ծննդյան օրը հունվարի 6-ից փոխվեց դեկտեմբերի 25-ը, որպեսզի մոռացության մատնվեր Արեւի աստված Միտրայի վերոհիշյալ արեւապաշտության տոնը, որը նշվում էր դեկտեմբերի 21-ից 30-ը, թեպետ գլխավոր միջոցառումները անցկացվում էին դեկտեմբերի 25-ին: Որպեսզի վերջնականապես արմատախիլ արվեր հեթանոսական սովորույթը, 336 թվականին հռոմեական եկեղեցին պաշտոնապես դեկտեմբերի 25-ը սահմանեց Քրիստոսի Ծննդյան օր, իսկ հունվարի 6-ը՝ Մկրտության օր: Չորրորդ դարում, բացառությամբ Հայոց եկեղեցու, Արեւմուտքի եւ Արեւելքի եկեղեցիներն ընդունեցին այդ ամսաթվերը, ըստ որի, Քրիստոսի Ծննդյան եւ Մկրտության տոները նշվում էին հունվարի 6-ին, իսկ 19-ին՝ Ուղղափառների մոտ: Միայն Հայոց Առաքելական եկեղեցին էր, որն առաջինն ընդունեց Քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն (301 թվական), եւ շարունակեց նշել Քրիստոսի Ծնունդն ու Մկրտության տոնը՝ ընդհանուր Աստվածահայտնություն անվամբ, հունվարի 6-ին:

Հայտնի է, որ Արեւմտյան քրիստոնեական աշխարհը Քրիստոսի ծնունդը նշում է դեկտեմբերի 25-ի գիշերը, ընդ որում՝ Ծննդյան տոնը՝ դեկտեմբերի 25-ին պետական մակարդակով նշում են ոչ միայն կաթոլիկները, այլեւ առանձին Ուղղափառ երկրները, ինչպես նաեւ լյութերականները եւ բողոքական եկեղեցու առանձին ներկայացուցիչները՝ մոռանալով, որ ինչպես հայտնի է, Աստծո որդու Մկրտությունը տեղի է ունեցել Քրիստոսի ծննդյան օրը, երբ լրացավ նրա 30 տարին: Այդ պնդումը կապված է Հին Կտակարանի այն դրույթի հետ, որի համաձայն, ոչ ոք մինչեւ 30 տարին լրանալը իրավունք չուներ զբաղվել քարոզչությամբ: Քրիստոսը քարոզչությունը սկսեց, երբ լրացավ նրա 30 տարին: Ուստիեւ, նա քարոզչությունը սկսեց Մկրտությունից հետո: Ակնհայտ է, որ Քրիստոսի ծննդյան ստույգ ամսաթիվը հաստատված չէ, քանզի այդ մասին Աստվածաշնչում ոչինչ չի ասվում, թեպետ մինչեւ 4-րդ դարը, Քրիստոսի ծննդյան օրը բոլոր քրիստոնեական եկեղեցիների կողմից նշվում էր հունվարի 6-ին: Այսպիսով, պահպանելով հաստատված ավանդույթը՝ հայերը շարունակում են այդ օրը նշել հունվարի 6-ին: Ծննդյան եւ Մկրտության տոնին նախորդում է Ճրագալույցի տոնը, որի ժամանակ հավատացյալները եկեղեցուց իրենց ընտանիքներ են տանում վառվող կրակը: Այն խորհրդանշում է Բեթղեհեմի Աստղի լույսը, որը մոգերին ցուցանեց այն քարանձավը, որտեղ ծնվեց Հիսուս Քրիստոսը: Ծննդյան եւ Աստվածաօրհնության տոնը Տեր Աստված Հիսուս Քրիստոսի Աստվածահայտնության եւ խաղաղության տոնն է: Այն կոչվում է Աստվածահայտնության տոն, քանի որ այդ ժամանակ Տեր Հիսուս Քրիստոսի հռչակը հայտնի դարձավ համայն մարդկությանը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Անցնող 2019 թվականը պետական կյանքի վերակազմակերպման, նոր ծրագրերի, իրագործումների ժամանակ եղավ: Հայրենական, ազգային եւ հոգեւոր մեր անդաստանում ունեցանք հաջողություններ: Դրական իրագործումների կողքին տակավին առկա են հրատապ լուծման կարոտ խնդիրներ եւ նոր մարտահրավերներ, որոնք պահանջում են մեր ողջ ժողովրդի համատեղ ջանքն ու աշխատանքը: Յուրաքանչյուրիս ծառայանվիրումի ոգին, պատասխանատվությունն ու դավանած արժեքներն են, որ պիտի իրական դարձնեն հզոր հայրենիքի, պայծառ ապագայի մեր տեսիլքները:

Նոր տարին նոր սկիզբ է մեր կյանքը նորոգելու եւ առաջընթացի ուղիներում հաստատուն պահելու: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր ապրած յուրաքանչյուր օրվա համար: Պատասխանատու ենք Աստծո, մեր պատմության, մեր նախնյաց եւ սերունդների առջեւ: Հայրապետիս հորդորն ու պատգամն է, սիրելիներ, որ այս գիտակցությամբ անենք առավելագույնը Հայաստանն ու Արցախը հզորացնելու, մեր կյանքը խռովող երեւույթները փարատելու, ամրապնդելու համերաշխության ոգին մեր հասարակության մեջ եւ միասնականությունը ազգային մեր կյանքում: 2020 թվականը հայրենաշինության եւ ազգային կյանքի պայծառացման տարի դարձնենք միմյանց հանդեպ սիրով, բարու մեջ մեր նախանձախնդրությամբ եւ միշտ ապավինելով Աստծուն, քանզի ինչպես սաղմոսերգուն է ասում՝ «Տերը մոտ է բոլոր նրանց, ովքեր կանչում են Իրեն, բոլոր նրանց, ովքեր կանչում են Իրեն ճշմարտապես» (144:18):

Ամանորի այս հուսառատ պահին Մեր ջերմ բարեմաղթանքներն ենք բերում ամենքիդ՝ պաշտոնյա, գործարար, մտավորական, արվեստագետ, հողի մշակ ու աշխատավոր, բոլոր բոլորիդ, ում ջանքերի, հավատքի, նվիրումի շնորհիվ զորանում են կամքն ու վճռականությունը կերտելու մեր հայրենիքի ու ժողովրդի անկասելի առաջընթացը: Հայրապետիս սերն ու բարձր գնահատանքը՝ Հայոց բանակի յուրաքանչյուր քաջարի զինվորին: Մեր աղոթքն ու օրհնությունը՝ Նոր տարին ծառայության մեջ դիմավորողներին եւ այս պահին ընտանեկան օջախից հեռու գտնվողներին: Աղոթենք միասնաբար Մերձավոր Արեւելքում դժվարություններ դիմագրավող մեր ժողովրդի զավակների, նաեւ նեղության մեջ գտնվողների, հոգով եւ մարմնով տկարների համար:

Մեր աղոթքը բարձրացնենք աշխարհի խաղաղության համար՝ հայցելով, որ Բարին Աստված Իր Սուրբ Աջի ներքո պահպանի մեր հայրենիքը, մեր ժողովրդին՝ ի սփյուռս աշխարհի եւ արդյունավորի Հայաստանի եւ Արցախի մեր իշխանությունների ջանքերը դարերով փայփայած անկախ պետականության զորացման ճանապարհին:

Թող Փրկիչ մեր Տիրոջ սերն ու առատ շնորհները միշտ ձեզ հետ լինեն, հովանի՝ ձեր կյանքին եւ ձեր ընտանիքներին:

Շնորհավո՜ր Նոր տարի: